

ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրավաբան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԳԻ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՆԱՉԱՌ ՈՒ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ
ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԱԾ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ**

Սույն հոդվածի թեմայի ընտրությունը արդիական է հատկապես Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին մեկնարկած սահմանադրական բարեփոխումների գործընթացի համատեքստում, որից անմասն չէ նաև Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը: Հոդվածում հաջորդաբար ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի առաքելությունը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1995 թվականի հուլիսի 05-ի և 2005 թվականի նոյեմբերի 27-ի տեքստերի մեջ Արդարադատության խորհրդի կազմավորման կարգի և լիազորությունների համեմատական վերլուծությունը, կատարված հիմնական փոփոխությունները, ինչպես նաև հեղինակը փորձ է կատարել համեմատական իրավագիտության հիման վրա վեր հանել Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի կազմավորման կարգի, Սահմանադրությանը ամրագրված լիազորությունների, գործունեությանն առնչվող հիմնախնդիրները և միաժամանակ ներկայացնել այդ հիմնախնդիրների (Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի կառուցակարգային անկախության և ֆունկցիոնալ արդյունավետության ապահովմանն առնչվող) լուծման արդյունավետ տարբերակներ՝ առաջին հերթին հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում մեկնարկած սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի տրամաբանությունը:

Հիմնաբառեր - սահմանադրական բարեփոխումներ, Արդարադատության խորհուրդ, դատական իշխանություն, դատական համակարգ, Դատական խորհուրդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, կառուցակարգային անկախություն և ֆունկցիոնալ արդյունավետության ապահովում, դատաիրավական բարեփոխումներ, դատաիրավական քաղաքականություն, «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), արդարադատության անաչառու արդյունավետ իրականացմանը օժանդակող պետական մարմին:

Սույն հոդվածի թեմայի ընտրությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին մեկնարկած սահմանադրական բարեփոխումների գործընթացով, որից անմասն չէ նաև Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը¹:

Դատական իշխանության անկախության երաշխիքների շարքում կարևոր նշանակություն ունի դատական համակարգի կազմավորման գործընթացը: Ցանկացած երկրում դատավորների անկախությունը սկսվում է նրանից, թե վերջիններս ինչ կարգով են նշանակվում: Գաղտնիք չէ, որ Հա-

յաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի անկախության ապահովումը դատական իշխանության անկախության ապահովման կարևորագույն երաշխիքներից է: Այս կապակցությամբ ժողովրդավարական և արդարադատության ոլորտում ավանդույթներ ունեցող երկրների փորձը ցույց է տալիս, որ դատական անկախության ապահովման համար պետք է մշակվեն Դատական խորհուրդների կազմավորման այնպիսի եղանակներ, որոնք կապահովեն դատարանների անկախությունը, ինչպես օրենսդիր և գործադիր թևերից, այնպես էլ հենց դատական համակարգի ներսում դատա-

www.journal.lawinstitute.am

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րանների և դատավորների ներքին անկախության սկզբունքի ապահովման տեսանկյունից: Սովորաբար այդպիսի խորհուրդների կազմի մեջ մտնում են իշխանության բոլոր երեք թևերի ներկայացուցիչները, ինչպես նաև անկախ անդամներ, որոնք այդ ոլորտում աչքի են ընկնում իրենց ձեռնահասությամբ և հեղինակությամբ:

Մույն հոդվածում հաջորդաբար ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի առաքելությունը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1995 թվականի հուլիսի 05-ի և 2005 թվականի նոյեմբերի 27-ի տեքստերի մեջ Արդարադատության խորհրդի կազմավորման կարգի և լիազորությունների համեմատական վերլուծությունը, կատարված հիմնական փոփոխությունները, ինչպես նաև փորձ է կատարվում համեմատական իրավագիտության հիման վրա վեր հանել Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի կազմավորման կարգի, Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունների, գործունեությանը առնչվող հիմնախնդիրները և միաժամանակ ներկայացնել այդ հիմնախնդիրների (Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի կառուցակարգային անկախության և ֆունկցիոնալ արդյունավետությանն առնչվող) լուծման արդյունավետ տարբերակները՝ առաջին հերթին հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում մեկնարկված սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի տրամաբանությունը:

«Դատավորի կարգավիճակի մասին» 1998 թվականին ընդունված եվրոպական խարտիան, նկատի ունենալով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1985 թվականի նոյեմբերին ընդունված մագիստրատուրաների անկախության ապահովման հիմնարար սկզբունքները, ինչպես նաև հաշվի առնելով, որ դատավորի կարգավիճակն ամենից առաջ ենթադրում է գործիմացություն, անկախություն և անշահախնդրության ապահովում, այսինքն՝ այն, ինչ օրինականորեն ակնկալում է ցանկացած մարդ դատական մարմիններից ու յուրաքանչյուր դատավորից, որոնց վստահում է իր իրավունքների պաշտպանությունը, սահմանում է դատական համակարգի ձևավորման ու գործունեության հիմնարար պահանջներ: Դրանց թվում բացառիկ կարևոր դեր է վերապահվում դատավորների ընտրության, նշանակման ու գործունեության դադարեցման կարգին: Վերոնշյալ խարտիայի 1.3-րդ կետով սահմանվում է, որ դատավորների ընտրությամբ,

նշանակմանը, ծառայության կատարմանը կամ դադարեցմանը վնասող ցանկացած որոշման կապակցությամբ կարգավիճակը նախատեսում է գործադիր ու օրենսդիր իշխանություններից անկախ օղակի մասնակցություն, որի շրջանակներում նիստերի մասնակիցների առնվազն կեսը մրցակցությամբ ընտրված դատավորներ են²:

Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը ստեղծվեց քաղաքական բարդ պայմաններում և իրավական ու դատական համակարգի վերակազմավորման ժամանակահատվածում, ինչը չէր կարող նպաստել խորհրդի գործունեության արդյունավետությանը և հասարակական ճիշտ ընկալումների ապահովմանը: Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի ստեղծումը դատաիրավական բարեփոխումների առաջին փուլի արդյունք էր: Իսկ դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլում կատարվեցին սահմանադրական փոփոխություններ Արդարադատության խորհրդի կազմավորման կարգի և խորհրդի լիազորությունների առումով:

Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը՝ որպես սահմանադրական մարմին, ունի իր՝ Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունների շրջանակը, ինչպես նաև օրենսդրությամբ ամրագրված գործունեության կարգը: Հաշվի առնելով պետության դատաիրավական քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի ներգրավվածության աստիճանը՝ համոզված ենք, որ Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը հանդես չի գալիս դատաիրավական քաղաքականության ակտիվ սուբյեկտի դերում: Կարելի է վստահաբար ասել, որ Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը այսօր չունի անհրաժեշտ լիազորությունների շրջանակ, որոնք թույլ կտան այս մարմնին հանդես գալու որպես արդարադատության անաչառ ու արդյունավետ իրականացմանը օժանդակող պետական սահմանադրական մարմին կամ պետության դատաիրավական քաղաքականություն ձևավորող և իրականացնող մարմին: Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը, կարծում ենք, չպետք է հանդիսանա պետական իշխանության տարբեր թևերի կամ ներհամակարգային պայքարի թատերաբեմ, այլ այն պետք է լինի իշխանության բոլոր թևերից անկախ պետական մարմին, որն ունակ կլինի օժանդակել արդարադատության անաչառ ու արդյունավետ իրականացմանը, բարձրացնել դա-

www.journal.lawinsstitute.am

տավորների պրոֆեսիոնալիզմը, ապահովել դատական իշխանության անկախությունը և արդարադատության արդյունավետությունը:

Հայաստանի Հանրապետության՝ 1995 թվականի հուլիսի 05-ի Սահմանադրության մեջ նույնպես լայնորեն անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդին³:

Համաձայն Սահմանադրության 94-րդ հոդվածի՝ դատական մարմինների անկախության երաշխավորը Հանրապետության Նախագահն էր: Նա գլխավորում էր Արդարադատության խորհուրդը: Արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը խորհրդի փոխնախագահներն էին:

Խորհրդի կազմի մեջ էին մտնում նաև Հանրապետության Նախագահի կողմից հինգ տարի ժամկետով նշանակվող տասնչորս անդամ, որոնցից երկուսը՝ իրավաբան-գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ: Խորհրդի երեքական անդամ նշանակվում էին առաջին ատյանի դատարանների, վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի դատավորներից: Դատավորների ընդհանուր ժողովը յուրաքանչյուր տեղի համար գաղտնի քվեարկությամբ առաջադրում էր երեքական թեկնածու: Խորհրդի դատախազ անդամների թեկնածությունները առաջադրում էր գլխավոր դատախազը:

Ի տարբերություն գործող Սահմանադրության՝ նախկին Սահմանադրության 95-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը՝

1. արդարադատության նախարարի առաջարկով կազմում էր և Հանրապետության Նախագահի հաստատմանն էր ներկայացնում դատավորների պաշտոնական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումներ:

2. գլխավոր դատախազի առաջարկով կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն էր ներկայացնում դատախազների պաշտոնական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները:

3. առաջարկում էր վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների նախագահների թեկնածությունները, եզրակացություն էր տալիս արդարադատության նախարարի ներկայացրած մյուս դատավորների թեկնածությունների վերաբերյալ:

4. եզրակացություն էր տալիս գլխավոր դատա-

խազի տեղակալների և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները գլխավորող դատախազների թեկնածությունների վերաբերյալ:

5. առաջարկ էր ներկայացնում դատավորներին և դատախազներին որակավորման դասեր շնորհելու մասին:

6. առաջարկ էր ներկայացնում դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին:

7. դատավորներին ենթարկում էր կարգապահական պատասխանատվության: Դատավորին պատասխանատվության ենթարկելու հարցերը քննարկելիս Արդարադատության խորհրդի նիստերը վարում էր վճռաբեկ դատարանի նախագահը: Հանրապետության Նախագահը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը այդ նիստերին չէին մասնակցում:

8. Հանրապետության Նախագահի հարցմամբ կարծիք էր հայտնում ներման հարցերի վերաբերյալ:

2005 թվականի նոյեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների արդյունքում ամրագրվեց այն դրույթը, որ դատարանների անկախության երաշխավորը ոչ թե Հանրապետության Նախագահն է, այլ դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով: ՀՀ Սահմանադրության 94.1 հոդվածով նախատեսված է, որ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը: Արդարադատության խորհրդի կազմի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ, հինգ տարի ժամկետով, օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ: Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը առանց քվեարկության իրավունքի:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով՝

1. կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հիման վրա կատարվում են նշանակումներ.

Հայաստանի Հանրապետությունում դատավորների նշանակման գործընթացը առավել պարզեցված և կանխատեսելի դարձնելու նպատակով հարկ ենք համարում ներկայացնել «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) համար 772/2014 կարծիքը՝ Սլովակիայի Հանրապետության նախագահական կառավարման ձևի ժամանակահատվածում սահմանադրական դատարանի դատավորների նշանակման ընթացակարգի վերաբերյալ՝ որպես դատավորների նշանակման արևելյան մոդելը: Սլովակիայի Հանրապետության Սահմանադրության 134-րդ հոդվածի համաձայն՝ Սլովակիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի դատավորների նշանակման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝

ա) դատական խորհուրդը դատավորի յուրաքանչյուր թափուր տեղի համար առաջադրում է երկու թեկնածու,

բ) ներկայացված երկու թեկնածուներից Հանրապետության Նախագահը կատարում է ընտրություն,

գ) դատավորի նշանակումը կատարվում է Հանրապետության Նախագահի կողմից:

Կարևոր ենք համարում մաս նշել «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) համար 768/2014 կարծիքը՝ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի և բացատրական զեկույցի վերաբերյալ, որտեղ առաջարկվում է դատարանի նախագահներին ընտրել 4 (չորս) տարի ժամկետով⁴:

2. եզրակացություն է տալիս ներկայացված դատավորների թեկնածությունների վերաբերյալ.

3. առաջարկում է վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահների թեկնածությունները.

4. Հանրապետության Նախագահի հարցմամբ կարծիք է հայտնում ներման հարցերի վերաբերյալ.

5. դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին:

տական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի կազմավորման կարգը՝ ի տարբերություն 1995 թվականի հուլիսի 05-ի Սահմանադրության, 2005 թվականի նոյեմբերի 27-ին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում էականորեն փոխվել է: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը չի գլխավորում Արդարադատության խորհուրդը, իսկ ՀՀ Արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը այլևս չեն հանդիսանում խորհրդի փոխնախագահներ, դատախազները խորհրդի կազմում ներառված չեն (կատարվեց հստակ դիվերսիֆիկացիա դատավորների և դատախազների միջև), և այս առումով ՀՀ դատական համակարգը դառնում է լիովին անկախ իշխանության մյուս թևերից: Իսկ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից խորհրդի կազմում իրավաբան-գիտնական նշանակելու փաստը ապահովում է օրենսդիր իշխանության կողմից դատական իշխանությանը գուպելու և հակակշռելու հնարավորությունը:

Լիազորությունների առումով, բացառելով դատախազական համակարգի կազմավորման վերաբերյալ գործառնությունների իրականացումը, միայն մեկ լիազորություն վերցվեց խորհրդից 2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխություններով. Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը առաջարկ էր ներկայացնում դատավորներին որակավորման դասեր շնորհելու մասին:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունների բնույթը՝ կարող ենք վստահորեն փաստել, որ խորհուրդը լիարժեք ձևով և ամբողջապես չի կարող օժանդակել Հայաստանի Հանրապետության արդարադատության անաչառ ու արդյունավետ կազմակերպմանը և իրականացմանը: Քանզի այս մարմնի լիազորությունները սահմանափակվում են դատավորների նշանակման, առաջխաղացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերի շրջանակում և բացի այդ վերոնշյալ հարցերի կարգավորման գործընթացում էլ խորհրդի դերակատարությունը հիմնական ու առաջնային բնույթ չի կրում:

Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը՝ որպես արդարադատության անաչառ ու արդյունավետ իրականացմանը օժան-

www.journal.lawinsstitute.am

դակող պետական մարմին, լիովին հանդես չի գալիս որպես պետական իշխանության մարմին: Այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ պետական իշխանության մարմնի բնորոշ գծերն են՝

1. ունի կազմակերպական առանձնացվածություն և ինքնուրույնություն,
2. ստեղծվում է պետության կողմից սահմանված հստակ կարգով,
3. օժտված է պետաիշխանական լիազորություններով և գործառնություններով,
4. մասնակցում է պետության խնդիրների իրականացմանը,
5. ունի պետության կողմից իր համար սահմանված գործունեության հստակ կարգ⁵:

Վերլուծելով ցայսօր ՀՀ դատական համակարգում ստեղծված իրավիճակը, ներհամակարգային կապերը, ՀՀ «Դատական օրենսգրքի» համապատասխան դրույթները (նախկինում անդրադարձել ենք), Արդարադատության խորհրդի ինքնուրույնության և առանձնացվածության աստիճանը, գործունեության թափանցիկությունը՝ կարելի է վստահաբար փաստել, որ, չնայած Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի կազմավորման, լիազորությունների, գործունեության կարգի իրավական ամրագրվածությանը և հստակությանը, խորհուրդը փաստացի չունի ինքնուրույնություն և չի դիտվում որպես արդարադատության պատշաճ կազմակերպմանը և իրականացմանը օժանդակող մարմին, այլ հասարակության կողմից դիտվում է որպես դատավորներին «պատժող» մարմին:

Ուսումնասիրելով հատկապես արտասահմանյան մի շարք երկրների փորձը, ինչպես նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) տարբեր երկրների դատական իշխանության, դատական համակարգի և Դատական խորհուրդների վերաբերյալ զեկույցներում, կարծիքներում արտացոլված դրույթները, համեմատական վերլուծության հիման վրա, Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի կառուցակարգային անկախության և ֆունկցիոնալ արդյունավետության ապահովման նպատակով, առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի կազմում ընդգրկել փաստաբանների, հոգեբանների, երկար տարիներ դատավորի աշխատանքային փորձ ունեցող անձանց, պետական խորհրդականների, խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչների:

Միաժամանակ առաջարկում ենք սահմանադ-

րական բարեփոխումների արդյունքում հավասարեցնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի դատավոր անդամների և ոչ դատավոր անդամների (արտաքին անձինք) քանակային հարաբերակցությունը, ամրագրել Արդարադատության խորհրդի նախագահի ինստիտուտը՝ որպես Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի առջև դրված խնդիրների և արդյունավետ գործունեության համար պատասխանատու անձի, որը հրավիրում և նախագահում է խորհրդի նիստերը: Խորհրդի նախագահը կարող է ընտրվել խորհրդի անդամների կողմից, խորհրդի ոչ դատավոր անդամների կազմից որոշակի ժամկետով:

Ուսումնասիրելով հատկապես արտասահմանյան մի շարք երկրների փորձը, ինչպես նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) տարբեր երկրների դատական իշխանության, դատական համակարգի և Դատական խորհուրդների վերաբերյալ զեկույցներում, կարծիքներում արտացոլված դրույթները՝ համեմատական վերլուծության հիման վրա կարող ենք փաստել, որ արտասահմանյան երկրներում Դատական խորհուրդները նշանակալից դերակատարում են ունենում դատական համակարգի ինքնակառավարման և ներկազմակերպական հարցերի լուծման գործընթացում:

Կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել դատական իշխանության կազմակերպչական բնույթի հարցերին, քանի որ դրա օգնությամբ ապահովվում է որոշակի և հատուկ բնագավառի սոցիալական կառավարումը⁶: Ի տարբերություն իշխանության այլ թևերի դատական իշխանությունը ոչ թե բուրգային ենթակայական կառույց է, այլ գործառնական մի ամբողջ համակարգ, որի յուրաքանչյուր օղակ օժտված է անկախության անհրաժեշտ և բավարար երաշխիքներով, առանց որի իր գործառնությունները իրականացնել չի կարող⁷:

Ֆունկցիոնալ առումով, ուսումնասիրելով հատկապես արտասահմանյան մի շարք երկրների փորձը, որտեղ այս մարմինն անցել է զարգացման և կատարելագործման երկարատև ճանապարհ, ինչպես նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) տարբեր երկրների դատական իշխանության, դատական համակարգի և Դատական խորհուրդների վերաբերյալ զեկույցներում, կարծիքներում արտացոլված դրույթները, կարող ենք փաստել, որ արտասահմանյան տարբեր երկր-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ներում Դատական խորհուրդը ունի մասնավորապես տարբեր դատական ատյաններում դատավորների նշանակման, առաջխաղացման, փոխատեղումների, կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորություններ, առաջարկություն է ներկայացնում դատավորներին խրախուսելու նպատակով, կազմակերպում է դատավորների շարունակական կրթությունը և վերապատրաստումը, ընդունում է դատական համակարգի բյուջեի նախագիծը, լսում և հաստատում է տարբեր դատական ատյանների հաշվետվությունները իրավունքի կիրառման, դատարանների գործունեության վերաբերյալ, կարծիք է հայտնում դատական իշխանությանը և արդարադատությանն առնչվող բոլոր օրենսդրական նախաձեռնությունների, օրենքների նախագծերի վերաբերյալ՝ դատաիրավական ոլորտի օրենսդրության կատարելագործման նպատակով, հաշվետվություն է ներկայացնում արդարադատության պատշաճ կազմակերպման վերաբերյալ, ներկայացնում է հաշվետվություն նախորդ տարվա դատական մարմինների կազմավորման և գործունեության վերաբերյալ, անցկացնում է ստուգումներ, աուդիտներ, իրականացնում վերահսկողություն՝ դատական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ մշակելու նպատակով, իհարկե, չմիջամտելով դատարանների և դատավորների գործունեությանը, պատասխանատու է դատավորների գործունեության ընթացիկ գնահատման և գնահատման չափորոշիչների ներդրման համար, քննարկում է քաղաքացիների դիմումները դատավորների՝ էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ, կազմակերպում է դատարանների աշխատակազմերի անդամների ուսուցման դասընթացները, որոշում է դատավորների գործառնությունների հետ կապված հարցերը, կառավարությանն է ներկայացնում դատավորների այն թեկնածուներին, որոնք կներկայացնեն տվյալ պետությունը միջազգային դատական մարմիններում, իրականացնում է դատական վիճակագրություն, իրականացնում դատական համակարգի ինքնակառավարման, այդ թվում՝ ֆինանսական միջոցների, ինչպես նաև խորհրդատվական բնույթի այլ գործառնություններ: Վերջիններս իրական հնարավորություններ են ստեղծում Դատական խորհրդի համար՝ իրապես հանդես գալու որպես արդարադատության անաչառ ու արդյունավետ իրականացմանն օժանդակող ու երաշխավորող սահմանադրական, պետական մարմին:

Հայաստանի Հանրապետության դատական

համակարգի ներկազմակերպչական հարցերի արդյունավետ լուծման, ինչպես նաև դատական համակարգի և դատավորների ներքին անկախության սկզբունքի ամրապնդման նպատակով առաջարկում ենք սահմանադրական բարեփոխումների արդյունքում Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդին՝ որպես արդարադատության անաչառ ու արդյունավետ իրականացմանը օժանդակող մարմնի, վերապահել նաև հետևյալ ֆունկցիոնալ գործառնությունները՝

1. Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը պատասխանատու է դատավորների գործունեության ընթացիկ գնահատման, ինչպես նաև դատավորների աշխատանքի գնահատման չափորոշիչների ներդրման համար՝ չմիջամտելով դատավորների կողմից իրենց լիազորությունների կատարմանը.
2. Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը, նպաստելով արդարադատության անաչառ ու արդյունավետ իրականացմանը, գնահատում է դատարանների աշխատանքի որակը.
3. Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը կազմակերպում է դատավորների շարունակական վերապատրաստումը և կրթությունը.
4. Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը կազմակերպում է դատարանների աշխատակազմերի անդամների ուսուցման դասընթացները.
5. Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը ներկայացնում է կարծիքներ դատական համակարգին վերաբերող օրենսդրական նախաձեռնությունների և գործող օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ.
6. Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը ներկայացնում է առաջարկություններ դատաիրավական բարեփոխումների վերաբերյալ:

Կարծում ենք՝ յուրաքանչյուր տարվա ավարտին անհրաժեշտ է, Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդն իր տարեկան գործունեության և կատարած աշխատանքների վերաբերյալ ներկայացնի տարեկան հաշվետվություն նախորդ տարվա ընթացքում խորհրդի կողմից իրականացրած գործունեության, ինչպես նաև դատական համակարգի ներկազմակերպչական հարցերի վերաբերյալ, որտեղ կարտացոլվեն նաև դատական համակարգի կատարելագործ-

մանն ուղղված կոնկրետ առաջարկություններ, և վերջինս կդառնա իրական միջոց՝ մասնակցելու դատաիրավական քաղաքականության ձևավորմանը, դատական համակարգի կազմակերպչական հարցերի կատարելագործմանը և արդյունավետության բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհրդի դերակատարության թերի ընկալման պատճառներից է խորհրդի գործունեության ոչ հրապարակային բնույթը, իսկ տեղեկատվության ազատությունը հանդիսանում է իրավական պետության և քաղաքացիական հասարակության կարևոր տարրերից մեկը⁸:

Խորհրդի գործունեության հրապարակայնության ապահովման դեպքում կերաշխավորվի պետական իշխանության մարմնի հաշվետվողականության սկզբունքի, պետության կառուցակարգի սկզբունքներից՝ հրապարակայնության և թափանցիկության⁹, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի պահանջների իրականացումը:

Վերջինս բխում է նաև դատական խորհուրդների եվրոպական համացանցի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Բուխարեստի հռչակագրի 3-րդ կետի (1)-ին, (2)-րդ և (3)-րդ ենթակետերի դրույթներից¹⁰:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության Արդարադատության խորհուրդը այսօր առավել քան անհրաժեշտություն ունի Հայաստանի Հանրապետությունում դատական համակարգում իր առաքելության հստակեցման, ինչպես նաև խորհրդի կառուցակարգային անկախության և ֆունկցիոնալ արդյունավետության ապահովման:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծ, Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական խորհուրդ, Երևան, 2014 թվական, մարտ, 31-37 էջեր:

² Տե՛ս Հարությունյան Գ.Գ., Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան, Նժար, 2005թ., 256-257 էջեր:

³ Տե՛ս: Хачатурян Г. М., Первая Конституция Республики Армения /Ин-т философии и права, Ер., Нжар, 2001, сс. 252-253.

⁴ See 4 years in Serbia, Macedonia, Croatia, 5 years in Ukraine, Kazakhstan, Georgia, 6 years in the Russian Federation, Netherlands.

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևան, Երևանի պետական համալս. հրատ., 2008թ., 434-438 էջեր:

⁶ Տե՛ս: Ржевский В.А., Чепурнова Н.М., Судебная власть в Российской Федерации, конституционные основы организации и деятельности, М., Юристь, 1998г., С. 45.

⁷ Տե՛ս Հարությունյան Գ.Գ., Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքներ, Երևան, Նժար, 2003թ., էջ 55:

⁸ Տե՛ս Ա. Ղամբարյան, ՀՀ արդարադատության խորհրդի գործունեության հարցի շուրջ, «Իրավագիտություն», Բանբեր, Երևանի պետական համալսարան, 2011թ., թիվ 135., էջ 3:

⁹ Տե՛ս Հասարակագիտություն, դասագիրք հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի համար, Գ. Ղազինյան, Ա. Վաղարշյան, Ա. Գյուլբրուդյան, Երևան, Տիգրան Մեծ, 2010, էջ 167:

¹⁰ See Resolution of Bucharest on Transparency and Access to Justice, European Network of Councils for the Judiciary, Adopted in Bucharest (RO), 29 May 2009, p.3.

Արակел Արակеляն
Юрист

РЕЗЮМЕ

Обеспечение структурной независимости и функциональной эффективности совета юстиции Республики Армения, как государственного органа, помогающего беспристрастному и эффективному осуществлению правосудия в свете конституционных реформ, стартовавших в Республике Армения

Выбор темы настоящей статьи актуален особенно в контексте процесса конституционных реформ, стартовавших в 2013г. в Республике Армения, в котором участвует также Совет Юстиции Республики Армения. В статье поочередно показана задача Совета Юстиции Республики Армения, сравнительный анализ полномочий и порядка образования Совета Юстиции в текстах Конституции Республики Армения от 05 июля 1995 года и от 27 ноября 2005 года, внесенные основные изменения, а также автор сделал попытку на основании сравнительного правоведения показать основные задачи, касающиеся порядка образования Совета Юстиции Республики Армения, закрепленных Конституцией полномочий, деятельности, и одновременно представить эффективные варианты решения этих вопросов (касающиеся обеспечению структурной независимости и функциональной эффективности Совета Юстиции Республики Армения), в первую очередь, учитывая логику концепций конституционных реформ, стартовавших в Республике Армения.

Ключевые слова: конституционные реформы, Совет Юстиции, судебная власть, судебная система, Судебный совет, Конституция Республики Армения, обеспечение структурной независимости и функциональной эффективности, судебные реформы, судебная политика, Европейская комиссия “Демократия посредством права” (Венецианская комиссия), государственный орган, помогающий беспристрастно и эффективно осуществить правосудие.

Arakel Arakelyan
Lawyer

SUMMARY

The securing of the structural independence and functional effectiveness of the council of justice of the Republic of Armenia as a constitutional entity supporting the impartial and efficient realization of justice under the light of the constitutional reforms in the Republic of Armenia

The selection of the theme of this Article is actual especially in the Republic of Armenia within the context of process of constitutional reforms started in 2013, and the Council of Justice is a part of it. In this Article it is consecutively represented the mission of the Council of Justice of the Republic of Armenia, the comparative analysis of the formation order and authorizations of the Council of Justice in the texts of the Constitution of the Republic of Armenia of 05 July 1995 and 27 November 2005, the basic amendments, as well as, on the basis of comparative law the author tried to reveal the main problems of the formation order of the Council of Justice of the Republic of Armenia, authorizations determined by Constitution, the problems connected with the activity and simultaneously represent efficient variants of solving those main problems (related to the securing of the structural independence and functional effectiveness of the Council of Justice of the Republic of Armenia), first of all taking into consideration the logic of concept of the constitutional reforms started in the Republic of Armenia.

Keywords: constitutional reforms, Council of Justice, judicial power, judicial system, Judicial Council, Constitution of the Republic of Armenia, securing of the structural independence and functional effectiveness, judicial and legal reforms, judicial and legal policy, legal entity supporting the impartial and efficient realization of the justice, European Commission “Democracy through Law” (Venice Commission).